**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի, 2-րդ փողոց թիվ 48,հեռ. 060517670 էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**28 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 28-Ա**

## ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28-Ի ԹԻՎ 9 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի պահանջները՝

Համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Վերին Պտղնի համայնքի ավագանու 2015 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 9 արտահերթ նիստի օրակարգը

1.Վերին Պտղնի համայնքի ավագանու 2015 թվականի սեպտեմբերի 08-ի թիվ 26-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին:

2.Վերին Պտղնի համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 55-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

3.Քաղ. Վարդգես Հովսեփյանին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նշանակության հողամասի գործառնական նշանակությունը փոփոխելու մասին:

4.Վերին Պտղնի համայնքի ավագանու 2014 թվականի հոկտեմբերի 02-ի թիվ 39-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին:

5.Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ վաճառքի եղանակով օտարելը թույլատրելու մասին:

6.Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը կառուցապատման իրավունքով տրամադրելը թույլատրելու մասին:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԱՇՈՏ ____________
2. ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ ____________
3. ԳԱՍՊԱՐՅԱՆ ՅՈՒՐԻԿ ____________
4. ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՍԵՆ ____________
5. ՄՈՎՍԵՍՅԱՆ ԿԱՐԵՆ ____________

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի,2-րդ փողոց թիվ 48,հեռ. 060517670 էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

**28 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 29-Ն**

## ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 08-Ի ԹԻՎ 26-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի պահանջներով

Համայնքի ավագանին որոշում է՝

Վերին Պտղնի համայնքի ավագանու 2015 թ.-ի սեպտեմբերի 08-ի «Վերին Պտղնի համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 55-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 26-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչել:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԱՇՈՏ ____________
2. ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ ____________
3. ԳԱՍՊԱՐՅԱՆ ՅՈՒՐԻԿ ____________
4. ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՍԵՆ ____________
5. ՄՈՎՍԵՍՅԱՆ ԿԱՐԵՆ ____________

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի,2-րդ փողոց թիվ 48,հեռ. 060517670 էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**28 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 30-Ն**

## ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 55-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջներով

Համայնքի ավագանին որոշում է

Վերին Պտղնի համայնքի ավագանու 2014 թ.-ի դեկտեմբերի 24-ի «Վերին Պտղնի համայնքի 2015թ.-ի տարեկան բյուջեն հաստատելու մասին» թիվ 55-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝Վերին Պտղնի համայնքի միջնակարգ դպրոցի տարածքի բարեկարգման և ասֆալտապատման աշխատանքների կատարման համար՝

Հատված 2

1) Հավելված 2-րդ հատվածի 2911 տողի,խումբ 1,դաս 1,բաժին 09 16194000 թիվը փոխարինել 12994000 թվով:

2) Հավելված 2-րդ հատվածի 2922 տողի,խումբ 2,դաս 2,բաժին 09,100000 թիվը փոխարինել 3300000 թվով:

Հատված 3

1) Հավելված 3-րդ հատվածի , 5112 տողի, 5112 հոդվածի 15694000 թիվը փոխարինել 12494000 թվով:

2) Հավելված 3-րդ հատվածի, 5134 տողի, 5134 հոդվածի 800000 թիվը փոխարինել 900000 թվով:

Հատված 6

1) Հավելված 6-րդ հատվածի, 2911 տողի, խումբ 1,դաս 1, բաժին 09 5112 հոդվածի 15694000 թիվը փոխարինել 12494000 թվով:

2) Հավելված 6-րդ հատվածի, 2922 տողի, խումբ 2, դաս 2, բաժին 09 5112 հոդվածը շարադրել 3100000 թվով, 5134 հոդվածը շարադրել 100000 թվով:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԱՇՈՏ ____________

2. ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ ____________

3. ԳԱՍՊԱՐՅԱՆ ՅՈՒՐԻԿ ____________

4. ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՍԵՆ ____________

5. ՄՈՎՍԵՍՅԱՆ ԿԱՐԵՆ ____________

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի,2-րդ փողոց թիվ 48, հեռ. 060517670 էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**28 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 31-Ա**

## ՔԱՂ. ՎԱՐԴԳԵՍ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի ապրիլի 28-ի N513-Ն որոշման 3-րդ կետով,ինչպես նաև հիմք ընդունելով քաղ. Վարդգես Հովսեփյանի դիմումը.

Համայնքի ավագանին որոշում է

1. Վերին Պտղնի համայնքի վարչական տարածքում գտնվող, քաղ.Վարդգես Հովսեփյանին սեփականության իրավունքով պատկանող (ծածկագիր 07-062-0016-0050) 687.63 քմ բնակավայրերի նշանակության հողամասից 276.15 քմ հողամասի գործառնական նշանակությունը համարել փոփոխված ՝ հասարակական կառուցապատման:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԱՇՈՏ

2. ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

3. ԳԱՍՊԱՐՅԱՆ ՅՈՒՐԻԿ

4. ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՍԵՆ

5. ՄՈՎՍԵՍՅԱՆ ԿԱՐԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Գ. ՊՈՂՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ
ՊՏՂՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի,2-րդ փողոց թիվ 48,հեռ. 060517670 էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**28 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 32-Ա**

## ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 02-Ի ԹԻՎ 39-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի պահանջներով

Համայնքի ավագանին որոշում է.

1. Վերին Պտղնի համայնքի ավագանու 2014 թ.-ի հոկտեմբերի 02-ի «Վերին Պտղնի համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության հողամասը և դրա վրա գտնվող շինությունն ուղղակի վաճառքի ձևով օտարելու մասին» թիվ 39-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչել:

2. Քաղ.Յուրիկ Դալլաքյանին ետ վերադարձնել 2014թ.-ի նոյեմբերի 03-ին Վերին Պտղնի համայնքի գյուղապետարանի բանկային 900105231170 (հողի օտարումից եկամուտ) և 900105231212 (ինքնակամ կառուցված շինության օրինականացում) հաշվահամարներին վճարված համապատասխանաբար՝ 142868 և 84000 ՀՀ դրամ գումարները:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԱՇՈՏ
2. ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
3. ԳԱՍՊԱՐՅԱՆ ՅՈՒՐԻԿ
4. ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՍԵՆ
5. ՄՈՎՍԵՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի,2-րդ փողոց թիվ 48,հեռ. 060517670 էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**28 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 33-Ն**

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼԸ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67,68 հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

Համայնքի ավագանին որոշում է՝

1.Հավանություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը և թույլատրել օտարելու աճուրդ վաճառքի եղանակով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը համաձայն կից ցանկի՝

1) ծածկագիր 07-062-0032-001 - 0.3437 հա , գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք՝ 450000 (չորս հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ մեկնարկային գնով:

2) ծածկագիր 07-062-0032-0027 - 0.07 հա, գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք՝ 150000 (մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ մեկնարկային գնով:

3) ծածկագիր 07-062-0032-0026 - 0.039136 հա բնակավայրերի նշանակության խառը կառուցապատման հողամաս՝ 1770513 (մեկ միլիոն յոթ հարյուր յոթանասուն հազար հինգ հարյուր տասներեք ) ՀՀ դրամ մեկնարկային գնով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԱՇՈՏ

2. ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

3. ԳԱՍՊԱՐՅԱՆ ՅՈՒՐԻԿ

4. ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՍԵՆ

5. ՄՈՎՍԵՍՅԱՆ ԿԱՐԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Գ. ՊՈՂՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի,2-րդ փողոց թիվ 48,հեռ. 060517670 էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**28 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 34-Ա**

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼԸ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածի , 76-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի <<Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման,կառուցապատման իրավունքի և օգտագործման կարգը հաստատելու մասին>> N286 որոշման պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

Համայնքի ավագանին որոշում է

1 Հավանություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը. թույլատրել տրամադրել համայնքի ղեկավարին համայնքային սեփականություն հանդիսացող՝ Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում ընդգրկված հողամասերը կառուցապատման իրավունքով մրցույթային կարգով

1) ծածկագիր 07-062-0040-0002 - 0.095 հա բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողամաս ՝ 50 տարի ժամկետով, սահմանել տարեկան վարձավճարի մեկնարկային գին 50000 (հիսուն հազար) ՀՀ դրամ:

2) ծածկագիր 07-062-0103-0003 արդյունաբերական ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության 0.14 հա հողամաս՝ 45 տարի ժամկետով, սահմանել տարեկան վարձավճարի մեկնարկային գին 65000 (վաթսունհինգ հազար) ՀՀ դրամ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԱՇՈՏ ______________
2. ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ ______________
3. ԳԱՍՊԱՐՅԱՆ ՅՈՒՐԻԿ ______________
4. ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՍԵՆ ______________
5. ՄՈՎՍԵՍՅԱՆ ԿԱՐԵՆ ______________

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ**